

է Անգղ. կառավարութեան Կալկաթայի Դիւանատան մէջ: Սոյն կտակեալ գումարին 1830-32 տարիներու տոկոսները գանձուած են Ս. Յակոբի Կալկաթայի գործակալ Աւետ Աղաբեկեանէ, 1869 ին ալ Հնգկաց նուիրակ Թրակացի Ներսէս Մ. վրդ. զիջուած տոկոսները՝ 1490 անգղ. ոսկի գանձած ու յանձնած է վանքի գրամարկղին. մինչև հիմա կանոնաւորապէս կը գանձուին նոյն կտակին տոկոսները Կալկաթայի Ս. Նազարէթ եկեղեցիին Հոգաբարձութեան ձեռքով և կը ղրկուին վանքի ելեւմտից տեսչութեան:

Կտակարար Գէորգ Մանուկ ոչ միայն Կալկաթայի Մարդասիրական ձեկարանի շինութեան սատարած է, այլ նաեւ ձեմարանին կտակած է 30,000 ռուբլի և նոյնչափ ալ՝ ի նպաստ Մատրասի Հայոց դպրատան (Արսւնայիս, էջ 125):

Գէորգ ՆԱԼՊԱՆՏ ՄՈՒՍԻԿԵԱՆ, ԲԱԼՈՒՅԻ.— 1898 ին իր սեպհական մէկ տունը կը կտակէ Ս. Յակոբի վանքին. (Արձնգր. Տն. Ժողովի. նիստ ճԶԳ. 1898, էջ 226):

Գէորգ ՌԱՓԱՅԵԼԵԱՆ, ՊՈԼՍԵՅԻ.— Եգիպտոսի փոխարքայ Մէհմէտ Ալի փաշային տէմիրճիպաշին: Մ. 1811 ին. 1868 ին Ս. Յակոբի թանգարանին կը նուիրէ ազնիւ մարմարէ հինգ հատ մարդաչափ արձաններ՝ որոնց չորսը կը ներկայացնեն տարւոյն չորս եղանակները, և հինգերորդը յունական չաստուածուհի մը, (Սիօն, 1872, էջ 84): Ռափայելեան վախճանած է 1876 ին (անդ. 1876). 1852 ին յիշեալը շինած է նաեւ Գահիրէի Ս. Ածածին. եկեղեցիին Առաջնորդտրանը, ինչպէս յայտնի է հետեւեալ յիշատակարանէն.

«Նորոգ կառուցաւ առաջնոր
գարանս Հայոց արդեամբք
երկաթագործ ճարտարապետ
Գէորգ Աղայի Ռափայելեան
կ. պօլսեղւոյ ի յիշատակ իւր
և համեստուհի կողակցի
իւրոյ որ յեգիպտոս: 1852 Ապր. 7»:

Գէորգ ՏԻԳՐԱՆԵԱՆ, ՆՈՐ ՆԱԽԻՋԵՒԱՆՅԻ (քմիչի).— Եղբայրն է Սալպեան վարժի տեսուչ Սարգիս Տիգրանեանի: Իր 40,000 ռուբլի հարստութիւնը կը կտակէ Գէորգեան ձեմարա-